ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Рабочий класс Советской Армении в период развитого социализма», Изд-во АН Армянской ССР, Ереван, 1982, 239 с.

«Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում», *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, 239 էջ։*

Սովետական հասարակության զարգացման հետ միասին աճում է նաև բանվոր դասակարգի դերը։ Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, երկրի բանվոր դասակարգի (ինչպես նաև նրա ազգային շոկատների) պատմության մարքսիստական մեկնաբանումը, նրա քանակական, որակական փոփոխությունների վերլուծությունն առավել ևս ունեն գիտատեսական և գործնական կարևոր նշանակություն։ Այդ իսկ պատճառով վերջին տարիներին այդ պրոբլեմների լուսաբանմանը մեզանում լուրջ ուշադրություն է դարձվում։ Դրա վկայություններից է նաև գրախոսվող հոդվածների ժողովածուն, որի հեղինակային կոլեկտիվը հարուստ արխիվային, վիճակագրական և փաստական նյութի հիման վրա քննել է Հայաստանի բանվոր դասակարգի բազմակողմանի և բազմաբեղուն գործունեությունը, ցույց տվել նրա առաջատար դերը հանրապետության կյանքի բոլոր բնագավառներում, ընդգրկելով նրա արտադրական, հասարակական-քաղաքական գործունեությունը, սոցիալական ակտիվությունը, ինչպես նաև այն քանակական ու որակական փոփոխությունները և սոցիալ-դասակարգային տեղաշարժերը, որոնք կատարվել ու կատարվում են ինչպես բանվոր դասակարգի կազմում, այնպես էլ հասարակության սոցիալական կառուցվածքում։

Ցնցած աշխատությունը նվիրված է զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանի բանվոր դասակարգի պատմությանը, հեղինակային կոլեկտիվը նպատակահարմար է գտել առանձին գլխով (առաջին գլուխ, հեղինակ՝ Ա. Գրիգորյանց), թռուցիկ ցույց տալ 1920-ական թվականներից մինչև 1950-ական թվականների վերջը հանրապետության բանվոր դասակարգի ձևավորման, զարգացման պատմությունը, նրա անցած պատմական ուղու գլխավոր արդյունքները։

Անցնելով հիմնական նյութի շարադրմանը, հեղինակային կոլեկտիվը մեթոդոլոգիական տեսակետից ճիշտ է վարվել աշխատության երկրորդ գլուխը (հեղինակներ՝ Կ. Խուդավերդյան, Վ. Խոջաբեկյան) նվիրելով հանրապետության ինդուստրիալ զարգացման հիմնական գծերի մեկնաբանմանը։ Նրանում տրված է զարգացած սոցիալիզմի բնորոշ գծերի և փուլի գնահատականը, լուսաբանված են հանրապետության էկոնոմիկայի կառուցվածքում կատարվող փոփոխությունները, արդյունաբերության տեղաբաշխման ուղղությամբ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և կառավարության դրական աշխատանքը։ Այս գլխում համառոտ քննվել են հանրապետության ինդուստրիալ զարգացման հիմնական միտումներն ու ուղղությունները։ Իրավացիորեն նշվել է, որ Հայաստանի արդյունաբերության զարգացումը ներկա փուլում ընթանում է այն նույն օրինաչափություններով, ինչը հատուկ է ամբողջ երկրին (էջ 88)։ Սա նշանակում է, որ Հայկական ՍՍՀ-ն ևս ունի տնտեսական մեծ պոտենցիալ, ակտիվորեն է մասնակցում աշխատանքի համամիութենական բաժանմանը և իր ներդրումն ունի կոմունիստական հասարակարգի նյութատեխնիկական բազայի ստեղծման գործում։

Գրախոսվող աշխատության մեջ հատուկ գլուխ է հատկացված (երրորդ գլուխ, հեղինակ՝ Մ. Գրիգորյան) հանրապետության բանվոր դասակարգի կառուցվածքում քանակական և որակական փոփոխությունների մեկնաբանմանը, մանրամասնորեն ցույց են տրված բանվոր դասակարգի շարքերի համալրման աղբյուրները և ձևերը։ Հեղինակը նշում է, որ զարգացած սոցիալիզմի պայմաններում բանվոր դասակարգի համալրման գլխավոր գործոնը հանրակրթական դպրոցն է (էջ 91)։ Սակայն նման հարցադրումը ճիշտ չէ, քանի որ բանվոր դասակարգի շարքերի համալրման հիմնական աղբյուրը պրոֆտեխնիկական ուսումնարաններն են, որոնց շրջանավարտներն ավելի անմիջականորեն են համալրում բանվոր դասակարգի շար-

բերը։ Ի դեպ, նկատենք, որ միայն 10-րդ հնգամյակի ընթացքում երկրի բանվոր դասակարգի շարքերը համալրածների երկու երրորդը մասնագիտական կրթություն է ստացել պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության սիստեմում։ Նույն միտումն օրինաչափ է նաև մեր հանրապետության համար։ Վերլուծելով հանրակրթական դպրոցների շրջանավարտների և բուհ ընդունվողների համամասնությունը, Մ. Գրիգորյանը գրել է, որ 1975—1979 թթ., դպրոցների շրջանավարտների ավելի քան 80%-ը չի ընդունվել բուհ, այլ, որպես կանոն, աշխատանքի է անցել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում։ Կարծում ենք, որ նման ընդհանրացումը ճիշտ չէ։ Սխալ է կարծել, որ բուհ չընդունված դպրոցների շրջանավարտները, որպես կանոն, աշխատանքի են անցնում ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում։ Նախ, բուհ չընդունվող երիտասարդների մի մասն ընդունվում է միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ կամ էլ տեխնիկական ուսումնարաններ և երբեմն էլ չի ընդունվում որևէ տեղ աշխատելու կամ սովորելու։ Բացի այդ, հայտնի է, որ վերջին մի քանի տարիներին հանրապետության բանվոր դասակարգը աճել է տարեկան միջինը 25—30 հազարով, իսկ այդ նույն ընթացքում հանրապետության պրոֆտեխնիկական ուսումնարանները տվել են տարեկան միջինը 30 հազար շրջանավարտ[1]։ Սրանից դժվար չէ եզրակացնել, որ հանրապետության բանվոր դասակարգը գլխավորապես համալրվել է պրոֆտեխնիկական ուսումնարանների հաշվին, որոնց մի մասը, անշուշտ, միջնակարգ դպրոցների շրջանավարտներն են։

Բանվոր դասակարգի քանակական և որակական աճի հետևանքով հասարակության սոցիալական կառուցվածքում տեղի են ունենում արմատական տեղաշարժեր, որոնք, վերջին հաշվով, նպաստում են սոցիալական միատարր հասարակության ստեղծմանը։ Այդ պրոցեսում ևս բանվոր դասակարգն ունի առաջատար դեր, որի մեկնաբանմանն էլ նվիրված է գրախոսվող աշխատության չորրորդ գլուխը՝ «Բանվոր դասակարգը հանրապետության սոցիալական կառուցվածքում» (հեղինակ՝ Ս. Ամիրյան)։ Նրանում փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրված անցման շրջանից հետո բանվոր դասակարգի բաժինը հանրապետության սոցիալական կառուցվածքում։ Բանվոր դասակարգը լինելով սոցիալիզմի կառուցման գլխավոր ուժը, այնուամենայնիվ, 1939 թ. հանրապետությունում դեռ կազմում էր բնակչության ընդամենը 17,6%-ը։ Հանրապետության էկոնոմիկայի բուռն զարգացումը կապված է ետպատերազմյան շրջանի հետ. արդեն 1960-ական թվականների սկզբներին Հայաստանի բանվոր դասակարգը դարձավ բնակչության մեծաքանակ սոցիալական խումբը՝ 58%։ 1970 թ. մարդահամարի տվյալները ցույց տվեցին, որ բանվոր դասակարգը գրեթե միութենական բոլոր հանրապետություններում դարձել է ամենաբազմաքանակ սոցիալական խումբը։ Այդ միտումը շարունակում էր գործել նաև 1970-ական թվականներին, որի մասին վկայում են 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալները (էջ 118)։ Ճիշտ կլիներ, եթե Ս. Ամիրյանն իր ասածը հիմնավորեր կոնկրետ փաստերով՝ հենվելով այդ մարդահամարի տվյալների վրա։ Ի դեպ, 117—118 էջերում նշվում է, որ 1970 թ. հանրապետության բնակչությունը կազմում էր 2 մլն. 493 հազ., որից 1 մլն. 446 հազարը բանվոր դասակարգն էր։ Ինչ խոսք, այդ թիվը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 1970 թ. հանրապետության բանվոր դասակարգի թիվը հասնում էր ընդամենը 593 հազարի[2]։ Բացի այդ, անհրաժեշտ էր ավելի հստակ որոշել բանվոր դասակարգի սոցիալական սահմանները։ Ինչ խոսք, ճիշտ է, որ գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով փոխվում է բանվորի աշխատանքի բովանդակությունը, դրանում մեծ տեղ է գրավում մտավոր բաժինը և այլն, բայց դրանից եզրակացնել, թե բանվոր դասակարգի սոցիալական սահմաններն ընդլայնվում են, ընդգրկելով նաև ծառայողների և մտավորականության առանձին խմբեր (էջ 123), ճիշտ չէ։ Նման մեկնաբանումը տեղիք է տալիս բանվոր դասակարգի սահմանների արհեստական ընդլայնման, որը կարող է

---

[1] Հաշվումները կատարվել են մեր կողմից՝ «Народное хозяйство Армянской ССР в 1980 г.» (Ереван, 1981) վիճակագրական ժողովածուի 151 և 163 էջերի տվյալների հիման վրա։

[2] «Народное хозяйство СССР в 1980 г.», Статистический ежегодник, М., 1981, с. 361; «Народное хозяйство Армянской ССР в 1980 г.», Статистический ежегодник, Ереван, 1981, с. 151.

դառնալ սխալ հետևության պատճառ[3]։ Իհարկե, բանվոր դասակարգի շարքերի ընդլայնումն օբյեկտիվ պրոցես է, բայց դա տեղի է ունենում ոչ թե ինժեներների և ծառայողների առանձին խմբերի բանվորներ դառնալու, այլ շնորհիվ այն բանի, որ գիտատեխնիկական հեղափոխության հետևանքով առաջանում են նոր մասնագիտություններ, որոնք պահանջում են անդամ ինժեներական գիտելիքներ։ Սա էլ նշանակում է, որ տեղի է ունենում բանվորների և ինժեներատեխնիկական աշխատողների աշխատանքային մերձեցում և ոչ թե բանվոր դասակարգը կուլ է տալիս, կլանում է մյուս խավերին։ Իսկ այդ պրոցեսում առաջատար դերը պատկանում է բանվոր դասակարգին։ Նույն գլխի երկրորդ պարագրաֆում այդ տեսակետից միանգամայն ճիշտ և հաջողված է ցույց տրված բանվոր դասակարգի առաջատար դերը սոցիալական միատարր հասարակության կառուցման գործում։ Ճիշտ է հեղինակի այն եզրակացությունը, որ սոցիալիստական դասակարգերի և հասարակական խմբերի միջև տեղի են ունենում փոխազդեցություն, մերձեցման պրոցես, ընդ որում հասարակության մյուս սոցիալական խմբերը ձեռք են բերում բանվոր դասակարգի բարոյական հատկանիշները և սոցիալական դերը (էջ 124)։

Բանվոր դասակարգի առաջատար դերը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում մեծ չափով դրսևորվում է նաև նրա աշխատանքային ակտիվությամբ, որովհետև այն շարունակելով մնալ հիմնական արտադրողական ուժ, իր ակտիվ ստեղծագործական աշխատանքով նպաստում է հասարակության առաջընթացին։ Այդ հարցի մեկնաբանմանն էլ նվիրված է գրախոսվող աշխատության հինգերորդ գլուխը (հեղինակներ՝ Ս. Ամիրյան, Կ. Խուդավերդյան), որտեղ ցույց է տրված, որ առաջին հերթին բանվոր դասակարգի միջոցով է ստեղծվում կոմունիզմի նյութատեխնիկական բազան։ Միաժամանակ իրավացիորեն նշվում է, որ բանվոր դասակարգի դերը որոշվում է ոչ միայն նրա թվաքանակով (որը կարող է տնտեսության զարգացմանը, գիտատեխնիկական առաջադիմության արագացմանն ու ծավալմանը զուգընթաց փոփոխվել), այլև հասարակական արդյունքի արտադրման մեջ ունեցած մասնակցությամբ։

Բանվոր դասակարգի առաջատար դերին նպաստող հանգամանքներից մեկը գիտատեխնիկական առաջընթացի ծավալման ու արագացման գործում նրա ակտիվ մասնակցությունն է։ Այդ տեսակետից ճիշտ է այն հարցադրումը, որ զարգացած սոցիալիզմի պայմաններում ևս, տեխնիկական առաջընթացի համար բանվոր դասակարգի պայքարը դարձել է նրա գործունեության բնորոշ գծերից մեկը։ Այս հանգամանքը ստիպում է, որ աճի բանվորի ստեղծագործական ակտիվությունը և բարձրանա նրա կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Այս գլխում հատուկ ուշադրություն է դարձված բանվորների ստեղծագործական ակտիվության դրսևորման այնպիսի ձևերի մեկնաբանմանը, ինչպիսին սոցիալիստական մրցությունն է, որը զարգացած սոցիալիզմի պայմաններում ստանում է նոր բովանդակություն և դրսևորվում նոր ձևերով։ Բանվոր դասակարգի առաջատար դերին, նրա ստեղծագործական ակտիվությանը նպաստող կարևոր պայմաններից մեկն արտադրության կառավարմանը նրա մասնակցությունն է։ Ինչպես իրավացիորեն գրում է Կ. Խուդավերդյանը, սովետական բանվոր դասակարգը ոչ միայն հիմնական արտադրողական ուժ է, այլև երկրի ղեկավար դասակարգն է, որի ֆունկցիաները դուրս են գալիս ձեռնարկության շրջանակներից և ընդգրկում մեր հասարակության կյանքի բոլոր կողմերը (էջ 177)։ Կ. Խուդավերդյանը հանգամանորեն ցույց է տվել, որ բանվորներն իրենց ձեռնարկության կառավարմանն առաջին հերթին մասնակցում են արտադրական միավորումների, գործարանների և ֆաբրիկաների կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների միջոցով։ Որպես կանոն, բանվորները գերակշռում են ոչ միայն ձեռնարկության սկզբնական կուսակցական կազմակերպությունում, այլև այդ կազմակերպությունների ընտրական օրգանների կազմում, այն է՝ արտադրամասային կուսակցական բյուրոներում, գործարանային կուսակցական կոմիտեներում (էջ 178)։

Բանվոր դասակարգն իր առաջատար դերն իրականացնում է կոմունիստական կուսակցության միջոցով։ Այդ հետևությունը հաստատող փաստերը համոզիչ են, և քննվող գլխում բազմաթիվ օրինակներով ցույց է տրված Հայաստանի կոմունիստական կուսակցության սոցիալական կազմը, նրա դինամիկ աճը և փոփոխությունները, որոնք կրկին հաստատում են, որ ՍՄԿԿ-ն, վերածվելով համաժողովրդական կուսակցության, շարունակում է մնալ որպես բանվոր դասակարգի կուսակցություն։

---

[3] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս «Вопросы истории КПСС», 1982, № 4, с. 113; «Коммунист», 1981, № 13, с. 71.

Գրախոսվող ժողովածուի վեցերորդ գլխում (հեղինակներ՝ Կ. Խուդավերդյան, Ռ. Ադիզբեկյան) կարևոր տեղ է տրված Հայաստանի բանվոր դասակարգի նյութական բարեկեցության և կուլտուրական պահանջների աճի բավարարման հարցերի մեկնաբանմանը։ Բերված են բազմաթիվ վիճակագրական տվյալներ, արված են համեմատություններ, որոնք համոզիչ ցույց են տալիս հանրապետության բանվոր դասակարգի նյութական բարեկեցության աճը։ Հանրապետության ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների հիման վրա Ռ. Ադիզբեկյանը կազմել է աղյուսակ, որը հստակ պատկերացում է տալիս բանվորների հետաքրքրությունների մասին։ Միաժամանակ իրավացիորեն քննադատական խոսք է ասվում հանրապետության վիճակագրական մարմինների հասցեին, որոնց հրապարակած նյութերում տեղ չեն գտնում Հայաստանի աշխատավորության առանձին խավերի կուլտուրական պահանջները բնութագրող շատ տվյալներ (էջ 201)։

Աշխատության ամենամեծ արժանիքներից է այն, որ նրանում (յոթերորդ գլուխ) տրված է քննվող պրոբլեմի պատմագրությունը։ Հեղինակը (Կ. Խուդավերդյան), օբյեկտիվորեն գնահատելով սովետահայ պատմագիտության ծառայությունը հանրապետության բանվոր դասակարգի պատմության մեկնաբանման կարևոր գործում, միաժամանակ նշել է այն թերությունները, բացթողումներն ու վրիպումները, որոնք տեղ են դտել առանձին հեղինակների աշխատություններում։ Ընդհանուր առմամբ ըստ արժանվույն գնահատելով սովետահայ պատմագիտության նվաճումները հանրապետության բանվոր դասակարգի պատմության մինչև վերջին ժամանակներս սակավ ուսումնասիրված բնագավառում, Կ. Խուդավերդյանը գիտակ և հասուն մակարդակով է վերլուծում նյութը, անելով ուշագրավ ամփոփումներ ու ընդհանրացումներ։ Հետաքրքիր է նաև այն, որ Կ. Խուդավերդյանը վերլուծելով միևնույն պրոբլեմին վերաբերվող նույն հեղինակի աշխատությունները, ցույց է տվել, թե ինչպիսի զարգացում է անցել ուսումնասիրվող պրոբլեմը։ Նա նաև կատարել է նույն ժամանակաշրջանին և պրոբլեմին վերաբերվող տարբեր հեղինակների աշխատությունների վերլուծությունը և անցկացնել զուգահեռներ, ընդգծելով այն յուրահատուկը, որը հատուկ է տվյալ հեղինակին։ Վերլուծելով աշխատությունները, նա նշել է նաև հանրապետության բանվոր դասակարգի պատմությանը վերաբերվող այն հարցերն ու պրոբլեմները, որոնք կարոտ են ավելի հանգամանալի ուսումնասիրության։

Տալով հանրապետության բանվոր դասակարգի պատմագրությունը, Կ. Խուդավերդյանը չի բավարարվել միայն զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանին վերաբերվող աշխատությունների վերլուծմամբ, նա ընդգրկել է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմության հետ առնչվող գրեթե բոլոր աշխատությունները, գնահատելով և արժեքավորելով դրանցից յուրաքանչյուրը։

Ծանոթանալով Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանը վերաբերվող գրականության տեսությանը, մեկ անգամ ևս համոզվում ենք, որ անհամեմատ ավելի լավ է ուսումնասիրված հանապետության բանվոր դասակարգի մինչև զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանի պատմությունը։ Կ. Խուդավերդյանն իրավացիորեն առաջ է քաշել հանրապետության բանվոր դասակարգի՝ հատկապես զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանի պատմությունն առավել հանգամանորեն ուսումնասիրելու խնդիրը, ի նկատի ունենալով այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են սոցիալիստական մրցությունը, բանվոր դասակարգի հասարակական-քաղաքական գործունեությունը, գիտատեխնիկական առաջընթացի արագացմանը բանվորների մասնակցությունը, բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության և մտավորականության հետ, նրա ազդեցությունը հասարակության սոցիալական կառուցվածքի վրա և այլն։ Կարծում ենք, որ վերը թվարկված խնդիրներին կարելի էր ավելացնել բանվոր դասակարգի առաջատար դերն ապահովող այնպիսի գործոնի ուսումնասիրությունը, ինչպիսին բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումն է (որը, ի դեպ, գրքում գրեթե լուսաբանում չի ստացել) և իբրև դրա արդյունք՝ նրա սոցիալական, ստեղծագործական ակտիվության աճը։

Ամփոփելով նշենք, որ գրախոսվող աշխատությունն ընդհանուր առմամբ արժանի է դրվատանքի։ Այն առաջին կոլեկտիվ հետազոտությունն է՝ նվիրված զարգացած սոցիալիզմի շրջանի հանրապետության բանվոր դասակարգի պատմությանը, որում համակողմանիորեն ցույց է տրված նոր հասարակարգ կերտողի հեղափոխական, առաջատար դերը։

ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու